Ընդգծենք սակայն, որ վարքերն ու հատկապես վկայաբանությունները «Գիրք պատմութեանց»-ի ընդհանուր համակարգում չունեն հատուկ կառուցվածքային դերակատարություն և բովանդակային կարևոր արժեք: Այդուհանդերձ, զգացվում է, որ Դավրիժեցին դրանց տվել է նաև հավաստի պատմափաստի նշանակություն, թեպետ երբեմն էլ նկատելի է այն միտումը, որ վկայաբանական գրականությունը նա պարզապես ներբերել է իբրև լրացուցիչ, տպավորություն ստեղծող մաս՝ վկայագրված իրադարձություններին: Ընդ որում՝ ներբերումներն արված են ժանրային ավարտուն ու ամբողջական նկարագրով: Բացի այդ՝ ««Վկայությունների» և «հրաշքների» հետաքրքրաշարժ պատմությունները XVII դարի ընթերցողի համար կարող էին առավել հետաքրքրություն ներկայացնել և բացառված չէ, որ հենց այդ գլուխները մեծ ժողովրդականություն բերեցին «Գիրք պատմութեանցի» առաջին հրատարակությանը: Գիրքը դարձավ հայ ընթերցողի ամենասիրած գրքերից մեկը»,– գրում է Լենա Խանլարյանը[23]:

Ի տարբերություն զրույցների, ***վկայաբանությունները*** «Գիրք պատմութեանց»-ում դրսևորվել են հիմնականում իբրև առանձին գլուխներ: Միայն որոշ վկայաբանական հատվածներ են պահպանվել այլ իրադարձությունների ներկայացման համատեքստում, ուրիշ վերնագրերի տակ, իբրև լրացուցիչ տեղեկություններ:

«Գիրք պատմութեանց»-ի հյուսվածքում վկայաբանությունները տարբեր տեղադրություն ունեն, թեպետ որոշակի փուլում դրանք նաև կազմում են հաջորդական շարադրանք՝ «Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկօղայոսի», «Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ», «Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ քրիստոնէին», «Պատմութիւն նահատակութեան

---

[23] ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, տե՛ս «Առաջաբանը», էջ 27: